ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՐՏՆՉՈՂ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.

Նոր եւ նորագույն պատմության մեջ բազմաթիվ են օրինակները, երբ պետական իշխանությունները հալածանքներ եւ հետապնդումներ են իրականացրել կրոնի եւ կրոնական կազմակերպությունների նկատմամբ: Սակայն իր ծավալներով եւ շարունակականությամբ թերեւս ամենամեծ հակակրոնական եւ հակաեկեղեցական պայքարը ծավալվեց Խորհրդային Միությունում 1920-1930-ական թթ.: Թեեւ պետք է նշել, որ Խորհրդային Սահմանադրությամբ (եւ՝ 1924, եւ՝ 1936 թվականների) քաղաքացիներին տրվել էր ազատ դավանանքի իրավունք, իսկ ՀՄԽՀ 1922 թ. Սահմանադրությունն էլ բոլոր քաղաքացիներին «ազատորեն կրոնական եւ հակակրոնական պրոպագանդա վարելու»[1] իրավունք էր տալիս: Սահմանադրությամբ եւ խորհրդային օրենքներով, կարծես թե, Եկեղեցուն տրվում էր համապատասխան ազատություն, սակայն իշխանությունները Եկեղեցու եւ հավատքի նկատմամբ որդեգրեցին միանգամայն այլ վերաբերմունք՝ ելնելով այն համոզմունքից, որ «Եկեղեցին չի կարելի հավասարեցնել ո՛չ արհմիություններին, ո՛չ գիտական-լուսավորական եւ աշխատավորությանը օգտակար այլ կառույցներին»[2]:

Խորհրդային Միությունում հակակրոնական պայքարի գործուն մասնակիցը եւ անմիջական կազմակերպողը դարձավ «Մարտնչող անաստվածների միություն» հասարակական կազմակերպությունը, որը նպատակ էր դրել «...հետեւողական պայքար մղել հավատացյալների գիտակցության միջից կրոնական մնացորդները վերացնելու համար»[3]: Հակակարոնական եւ հակաեկեղեցական պայքարը Խորհրդային Միությունում դրսեւորվում էր երկու հիմնական ուղղությամբ: Նախ՝ խորհրդային իշխանությունները նպատակ ունեին ոչնչացնելու կամ գոնե խիստ թուլացնելու կրոնական կազմակերպությունները: Այդ նպատակով միության ողջ տարածքում, բնականաբար նաեւ Խորհրդային Հայաստանում սկսվեցին աննախադեպ հալածանքներ Հայ Առաքելական Եկեղեցու եւ հոգեւորականության նկատմաբ, որն ուղեկցվում էր Եկեղեցու գույքի, ունեցվածքի բռնագրավմամբ, հոգեւորականության աքսորով եւ ձերբակալություններով[4]:

1 Տե՛ս «ՀԽՍՀ 1922 թ. Սահմանադրություն», հատված առաջին, գլուխ առաջին, 6-րդ կետ:

2 «Հակակրոնական պրոպագանդը ներկա պայմաններում». Նյութերի ժողովածու, Երեւան. 1938, էջ 7:

3 «Հրահանգ ՄԱՄ-ի քաղաքային եւ գյուղական բջիջների աշխատանքի մասին», Երեւան, 1938, էջ 3:

4 Մանրամասն տե՛ս **Ս. Ստեփանյանց**, Հայ Առաքելական Եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երեւան, 1994. **Ա. Մանուկյան**, Հայ Առաքելական Եկեղեցու բռնաղատված հոգեւորականները 1930-1938 թթ., Երեւան, 1938. «Հայոց պատմություն», հատ. 4, գիրք առաջին, Երեւան, 2010, էջ 446-449:

Եկեղեցին պառակտելու եւ թուլացնելու համար 1920-1930-ականներին բոլշեւիկների հովանավորությամբ սկսեցին գործել այլընտրանքային «նոր եկեղեցիներ»: Հայաստանում իր գործունեությունը ծավալեց «Ազատ եկեղեցական եղբայրությունը»[5]: Երկրորդ՝ խորհրդային իշխանությունները լավ էին հասկանում, որ «պառակտիչ եկեղեցիներ» ստեղծելը, եկեղեցիներ փակելը եւ հոգեւորականներին ձերբակալելը բավարար չէ ժողովրդի միջից հավատքն ու կրոնական զգացմունքներն արմատախիլ անելու համար, ուստի, ելնելով Կարլ Մարքսի՝ «Կրոնը ափիոն է ժողովրդի համար»[6] հայտնի բանաձեւումից, նպատակ էին դրել զբաղվել ժողովրդի «գաղափարական», այն է՝ աթեիստական դաստիարակությամբ: Այդ իրականացնելու համար անհրաժեշտ էր «համբերատար ու համառ բացատրական աշխատանքով հասնել այն բանին, որ հավատացյալները հեռանան կրոնից»[7]: Այս գործին էլ պետք է լծվեր «Մարտնչող անաստվածների միություն» կամ «Անաստված» հասարակական կազմակերպությունն իր բազմաթիվ մասնաճյուղերով՝ ողջ երկրի տարածքում: 1925 թ. հունիսից իր գործունեությունն սկսեց ծավալել «Անաստվածների միությունը», որի կորիզը կազմում էին 1922 թ. հրատարակվող հակակրոնական «Безбожник» թերթի կողմնակիցները: 1926 թվականից «Անաստվածների միությունը» սկսեց հրատարակել նաեւ «Антирелигиозник» ամսագիրը: 1929 թ. հունիսի 11-15-ը Մոսկվայում տեղի ունեցած ԽՍՀՄ անաստվածների միության երկրորդ համագումարում կազմակերպությունը վերանվանվեց «Մարտնչող անաստվածների միություն», որով, փաստորեն, ընդգծվեց Եկեղեցու եւ կրոնի նկատմամբ անհանդուրժողականության եւ պայքարի սրման նոր փուլի մասին, որին հաջորդեցին «անաստված հնգամյակների» պլանների մշակման եւ իրականցման փորձերը:

Հայաստանում եւս բոլշեւիկ ղեկավարները մեծ եռանդով լծվեցին հակակրոնական եւ աթեիստական քարոզչության: 1927 թ. ՀԿ(բ)Կ կենտկոմին կից ստեղծվեց եկեղեցական եւ հակակրոնական հարցերով մշտական հանձնաժողով[8]: Նույն թվականի փետրվարին ստեղծվում է նախաձեռնող խումբ Հայաստանում «Անաստվածների միություն» ստեղծելու համար, որի կազմում էին Գ. Գյուլի-Քեղյանը, Դ. Բզնունին, Ն. Մկրտչյանը եւ ուրիշներ[9]: Արդեն 1928 թ. մարտին ստեղծվեց հայկական «Անաստվածների միություն»[10] հասարակական կազմակերպությունը, որի կարգախոսներից էր. «Պայքարը կրոնի դեմ պայքար է կուլտուրայի համար» նշանաբանը[11], իսկ միության պաշտոնական «Անաստված» ամսագիրը հրատարակվում էր «Կրոնի դեմ պայքարը պայքար է

5 Տե՛ս **Ս. Ստեփանյանց**, նշվ. աշխ., էջ 47-51. «Հայոց պատմություն». անդ, էջ 449-450. **Վ. Ղազախեցյան**, Հայաստանը 1920-1940 թթ., Երեւան, 2006, էջ 334-347, 526-535:

6 **Կ. Մարքս, Ֆ. Էնգելս**, Երկեր, հտ. 1, Երեւան, 1985, էջ 456:

7 «Հրահանգ ՄԱՄ-ի քաղաքային եւ գյուղական բջիջների աշխատանքի մասին», էջ 8:

8 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 28, թ. 8:

9 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, ց. 7, գ. 33, թ. 13:

10 «Անաստվածների միության» ստեղծման հարցը քննարկվել է դեռեւս 1926 թ. մարտին ՀԿ(բ)Կ քարտուղարության նիստում, սակայն հարցը հետաձգվում է Կենտկոմի ագիտացիայի եւ պրոպագանդայի բաժնին հանձնարարվում է «Անաստավծների միության» ստեղծման նախագիծ մշակել եւ ներկայացնել քարտուղարության հաստատմանը. տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 12, թ. 25:

11 Տե՛ս **Հ. Մ. Քթոյան**, ՀԿ(բ)Կ պայքարը աշխատավորության աթեիստական դաստիարակության համար. «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1974, թ. 11, էջ 3:

սոցիալիզմի համար» կարգախոսով[12]: 1928 թ. Խորհրդային Հայաստանի ողջ տարածքով՝ հիմնարկ-ձեռնարկություններում, գյուղերում, ուսումնական հաստատություններում, ստեղծվեցին անաստվածների առաջին խմբակները, որտեղ ընդգրկված էր ավելի քան 10.000 մարդ[13], որոնց թիվը 1940 թ. հասավ 40.000[14]: Բնականաբար, շատերը այս խմբակներում ընդգրկվում էին ոչ կամովի՝ ճնշումներից եւ աքսորից խուսափելու համար: Մարտնչող անաստվածների բջիջներում ընդգրկվածները վճարում էին նաեւ անդամավճար, որի չափը տատանվում էր. եթե, օրինակ, շարքային կարմիր բանակայինները եռամսյակի համար վճարում էին 5 կոպեկ, ապա 300 ռուբլուց ավել աշխատավարձ ստացողները վճարում էին 1 ռուբլի 25 կոպեկ[15]:

1929 թվականից հակակարոնական քաղաքականությունը խստացվեց: ՀԿ(բ)Կ կենտկոմից գավառներ ուղարկված գրությամբ պահանջվում էր ամեն կերպ աշխուժացնել «Անաստվածների միության» աշխատանքը: Գրության մեջ համոզմունք էր հայտնվում, որ հակակրոնական աշխատանքների արդյունավետության բարձրացման համար դպրոցները «իսկական հակակրոնական դաստիարակության օջախներ կարող են հանդիսանալ»[16]: Անաստվածների միությունը կրոնը համարում էր կապիտալիզմի մնացուկ, որը խանգարում է «հասարակության հաջող շարժմանը սոցիալիզմից դեպի կոմունիզմ», եւ դրա դեմ պայքարն անհրաժեշտ է կոմունիզմի հաղթանակի համար[17]: Աթեիստական պայքարն ուժեղացնելու համար իշխանությունները ձեռնամուխ եղան հակակրոնական բնույթի գրականության հրատարակությանը[18], իսկ 1939 թ. որոշվում է հակակրոնական գրականության հետ հրատարակել նաեւ հակակրոնական դասագիրք[19]: 1928 թ. որոշում է ընդունվում[20] հրատարակել «Անաստված» պաշտոնաթերթը: Այն հրատարակվում է մինչեւ 1935 թվականը[21]:

Միությունը ժողովրդի շրջանում հավատքը եւ կրոնական ավանդույթներն իսպառ արմատախիլ անելու նպատակով կազմակերպում էր նաեւ հակակրոնական բնույթի դասախոսություններ երկրի գրեթե բոլոր բնակավայրերում, հիմնարկ-ձեռնարկություններում, ակումբներում, դպրոցներում, ուսումնական բարձրագույն հաստատություններում՝ նպատակ ունենալով բնակչության շրջանում տարածել աթեիզմ ու անաստվածություն, կրոնի նկատմամբ մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի մոտեցումներ, փորձել պայքարել հասարակության շրջանում արմատացած կրոնական, եկեղեցական սովո-

12 Տե՛ս «Անաստված», 1928-1935 թթ.:

13 Տե՛ս **Գ. Արծրունի**, Մասսայական աթեիզմի զարգացումը Հայաստանում (1920-1930), Երեւան, 1982, էջ 21:

14 Տե՛ս «Անաստված», 1930, թ. 18, էջ 7:

15 Տե՛ս «Հրահանգ ՄԱՄ-ի քաղաքային եւ գյուղական բջիջների աշխատանքի մասին», էջ 12-13:

16 ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 18, թ. 44-45:

17 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1591, ց. 1, գ. 9, թ. 19:

18 Տե՛ս **Հ. Մ. Քթոյան**, ՀԿ(բ)Կ պայքարը աշխատավորության աթեիստական դաստիարակության համար, էջ 9-10:

19 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 19, գ. 36, թ. 111: Թեեւ պետք է նշել, որ հակակրոնական դասագիրք Հայաստանում թարգմանաբար արդեն լույս էր տեսել (Երեւան, 1931):

20 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 22, թ. 110:

21 Տե՛ս «Հայ պարբերական մամուլի մատենագրություն (1794-1967 թթ.)», Երեւան, 1970, էջ 4: «Անաստվածը» 1928-1933 թթ. հրատարակվել է որպես հանդես, իսկ 1933-1935 թթ.՝ որպես թերթ:

րույթների եւ ծեսերի դեմ: Մարտնչող անաստվածների միության քարոզչական ծրագրերը մշակված էին այնպես, որ քարոզիչներն իրենց հակակրոնական դրույթները հիմնավորում էին ոչ միայն այսպես ասած «գիտականորեն», այլեւ հաճախ ծաղրուծանակի էին ենթարկում մարդկանց կրոնական զգացմունքներն ու հավատը[22]: ԽՍՀՄ մարտնչող անաստվածների միության կենտրոնական խորհուրդն իր հրահանգում տեղական միություններին հանձնարարում էր «չսահմանափակվել միայն հակակրոնական բովանդակություն ունեցող դասախոսություններով, այլեւ կարդալ հետեւյալ դասախոսությունները՝ «Կոմունիզմը եւ քրիստոնեությունը», «Կոմունիստական բարոյականությունը եւ կրոնական բարոյականությունը», «Սոցիալիստական աշխատանքը եւ կրոնը», «Իմպերիալիստական երկրների պատերազմը եւ կրոնը» եւ այլն»[23]: Ժողովրդի տարբեր շերտերին հակակրոնական քարոզչության դրույթներն ընկալելի դարձնելու նպատակով հաճախ դասախոսությունների թեմատիկ ծրագրերում նյութերը բաժանվում էին խմբերի, այսինքն՝ բանվորների համար նախատեսվածները տարբերվում էին գյուղացիների կամ մտավորականության համար կարդացվող թեմաներից[24]: Առանձնակի ուշադրություն էր դարձվում նաեւ եկեղեցական տոներին եւ ամեն կերպ փորձ էր արվում ժողովրդի մեջ դարերով արմատացած ազգային եկեղեցական տոները[25] փոխարինել նոր՝ կոմունիստական տոներով: Ողջ երկրում կրոնական եւ եկեղեցական տոների դեմ պայքար բռնկվեց[26]: Նման ջանքերը, որպես կանոն, մասնակի հաջողություն էին ունենում արդյունաբերական շրջաններում եւ գործարաններում[27], եւ դա էր պատճառը, որ միության գավառային խորհուրդներում իրենց առջեւ նպատակ էին դնում՝ բանվորությանը 100 տոկոսով ընդգրկել անաստված կազմակերպություններում: Իսկ գյուղական վայրերում ժողովուրդը, չնայած հալածանքներին եւ զանազան ճնշումներին, շարունակում էր նշել եկեղեցական տոները, անգամ, երբ գյուղերում շատ եկեղեցիներ փակվել էին կամ վերածվել պահեստի: Անաստվածների կենտրոնական խորհուրդը շրջաններ ուղարկած իր շրջաբերականներում պարտավորեցնում էր, որ հակակրոնական քարոզչությունը կազմակերպված եւ նպատակային ձեւով իրականացվի հատկապես եկեղեցական տոների ժամանակ[28]: «Անաստված» թերթում հաճախ էին հանդիպում եկեղեցական տոների դեմ ուղղված կարգախոսներ, իչպես օրինակ՝ «Կորչի՛ Զատիկը, կեցցե՛ հնգամյակը չորս տարում»[29] եւ այլն: Բոլշեւիկներն անում էին ամեն ինչ, որ ժողովուրդը մոռանա եկեղեցական տոները: Օրինակ՝ 1928 թ. Եկեղեցու հրատարակած օրացույցը թույլատրվեց տարածել միայն օրացույցի առաջին եւ վերջին էջերը հեռացնելուց հետո, որտեղ նշված էին եկեղեցական տոները եւ տեղադրված էին Կաթողիկոսի եւ Սուրբ

22 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1591, ց. 1, գ. 2, գ. 4, գ. 6, գ. 8, գ. 9:

23 ՀԱԱ, ֆ. 1591, ց. 1, գ. 6, թ. 2, թ. 19:

24 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1591, ց. 1, գ. 6, թ. 2:

25 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1591, ց. 1, գ. 7, թ. 3:

26Տե՛ս **Վ. Դալաքյան**, Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը հասարակական կազմակերպություններում (1926-1937). «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1988, թ. 2, էջ 6-8:

27 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1929, հունվարի 4, հունվարի 6:

28 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1591, ց. 1, գ. 6, թ. 5:

29 «Անաստված», 1930, թ. 4, էջ 3:

Էջմիածնի լուսանկարները[30]: Իսկ օրացույցը թույլատրվեց հրատարակել գրաբարով միայն այն հիմնավորմամբ, որ «լայն շրջանակների կողմից գրաբարի չիմացությունը կսահմանափակի օրացույցի հնարավոր ազդեցությունը նրանց վրա»[31]:

Հակակրոնական պայքարը երբեմն ունենում էր այնպիսի զավեշտալի եւ տարօրինակ դրսեւորումներ, երբ, ասենք, հիմնարկ-ձեռնարկությունների որոշ արտադրամասեր կամ գյուղերում կոլտնտեսություններ ստանում էին «Անաստված» անվանումը: Օրինակ՝ Կոտայքի շրջանի Առինջ գյուղի կոլտնտեսությունը կրում էր հենց այդպիսի անվանում[32]: Իսկ ողջ Խորհրդային Միությունում գործող ՄԱՄ բջիջների միջեւ հայտարարվել էր սոց. մրցություն «Մարտնչող անաստված» սուզանավը կառուցելու համար գումարներ հավաքելու նպատակով[33]:

ՄԱՄ կենտրոնական խորհուրդն իր տեղական բջիջների միջոցով տեղեկատվություն էր հավաքում այս կամ այն բնակավայրում տարբեր մարդկանց կողմից կրոնական, եկեղեցական արարողությունների կատարման վերաբերյալ եւ այն ներկայացնում էր համապատասխան կուսակցական մարմիններին[34]: Տեղեկատվությունն անհրաժեշտ էր նաեւ հակակրոնական քարոզչության համար, քանի որ ԽՍՀՄ ՄԱՄ կենտրոնական խորհրդից ստացված անաստված քարոզիչների վերաբերյալ կանոնադրությունը դասախոսներից պահանջում էր «օգտագործել տեղական նյութը հակակրոնական աշխատանքի եւ տերտերության գործունեության մասին»[35]: Անաստվածների գործունեությունը երբեմն հատում էր բարոյական նորմերի բոլոր սահմանները, երբ, օրինակ, միության կենտրոնական խորհուրդը անաստվածների գավառային խորհուրդներից ներկայացվելիք հաշվետվության մեջ եկեղեցիների փակման, զանգերի ձուլման եւ արդյունաբերական նպատակներով օգտագործման, կրոնական տոները հեղափոխական տոներով փոխարինման տեղեկատվությունից զատ՝ լկտիաբար պահանջում էր տեղեկատվություն «գերեզմանների տեղափոխման մասին»[36]: Քարոզչության արդյունքում այնպիսի վիճակ էր ստեղծվել, որ գյուղացիները միմյանց հաճախ հարցնում էին. «Հա՞յ ես, թե՞ բոլշեւիկ, Աստծո՞ւն ես հավատում, թե՞ կոմունիստներին»[37]:

Հակակրոնական պայքարի յուրօրինակ դրսեւորում էին այսպես կոչված «կարմիր կնունքները», երբ կուսակցականները խորհրդային իշխանության ներկայացուցիչների հետ այցելում էին տները եւ կազմակերպում Հայ առաքելական ծեսով մկրտվածների «վերամկրտում», որի արդյունքում «դարձի» եկածները հաճախ ստանում էին նոր՝ հեղափոխական, կոմունիստական անուններ՝ Կառլեն, Մառլեն, Լենդրուշ եւ այլն: Իսկ 1931 թ. կոմունիստները հակակրոնական պայքարի նոր միտք հղացան՝ ստեղծել «գիտական եւ հակակրոնական թանգարան»[38], որը պետք է տեղավորվեր Երեւանի Ս. Գրի-

30 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 22, թ. 53:
31 ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 22, թ. 56:
32 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 96, ց. 1, գ. 231, թ. 30:
33 Տե՛ս «Անաստված» ամսագիր, 1930-1932 թթ.:
34 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1591, ց. 1, գ. 5, թ. 1-5:
35 ՀԱԱ, ֆ. 1591, ց. 1, գ. 3, թ. 2:
36 ՀԱԱ, ֆ. 1591, ց. 1, գ. 3, թ. 15:
37 ՀԱԱ, ֆ. 96, ց. 1, գ. 69, թ. 11:
38 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 228, թ. 4:

գոր Լուսավորիչ եկեղեցում[39]: Այդ նպատակով Երեւանի քաղաքային խորհուրդը եկեղեցին հատկացրեց «Մարտնչող անաստվածների միությանը»[40]: Սակայն, ինչպես երեւում է, հակակրոնական թանգարանի ստեղծումն այնքան էլ դյուրին գործ չի եղել, չնայած կուսակցության կենտկոմը թանգարանի կարիքների համար պարբերաբար դրամային հատկացումներ էր իրականացնում[41]: Դա է ապացուցում ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոյի 1938 թ. մարտի 27-ի որոշումը, երբ կուսակցական վերնախավը տարիներ անց կրկին անդրադառնում է հակակրոնական թանգարանի ստեղծման խնդրին եւ որոշում է «1938 թվականին ավարտել հակակրոնական թանգարանի ստեղծումը»[42]:

Մարտնչող անաստվածները 1930-ական թթ. նախատեսում էին եռանդուն հակակրոնական եւ հակաեկեղեցական պայքար իրականացնել նաեւ հայրենադարձների շրջանում՝ ելնելով այն համոզմունքից, որ նրանք «ավելի կապված են Եկեղեցուն եւ պահապանում են շատ եկեղեցական տոներ ու ծեսեր»[43]: 1939 թ. Կենտկոմը որոշում է անաստված քարոզչությունը հատկապես ուժեղացնել դպրոցներում աշակերտների եւ ուսուցիչների շրջանում, դպրոցականների մասնակցությամբ ստեղծել պատանի անաստվածների բջիջներ[44]:

Այնուամենայնիվ, այս ամենը սպասված արդյունքը չտվեց եւ չէր կարող տալ: Նախ «Մարտնչող անաստվածների միությունը» չուներ անհրաժեշտ բանիմաց կադրեր քարոզչությունն արդյունավետ կազմակերպելու համար, չնայած որակյալ եւ բանիմաց քարոզիչներ պատրաստելու նպատակով բացվեցին եռամսյա դասընթացներ, իսկ 1938 թ. նախատեսվում էր Երեւանում անցկացնել անաստված կադրերի պատրաստման եւ վերապատրաստման մշտական դասընթացներ[45]: Ավելին, որոշում էր ընդունվել քարոզչական աշխատանքներում ընդգրկել նաեւ «որակավորված գիտական աշխատողներին», ինչպես նաեւ հակակրոնական բնույթի թերթերից ու գրականությունից զատ այդ նպատակով օգտագործել հանրապետական մամուլը՝ «Խորհրդային Հայաստան», «Կոմունիստ», «Ավանգարդ», «Կզլ-Շաֆակ» թերթերը[46] եւ ռադիոհաղորդումները[47]: Չնայած գործադրված հսկայական ջանքերին եւ պայքարի դաժան ձեւերին, երբ հալածանքների արդյունքում երկրում գործող եկեղեցիների եւ հոգեւորականների թիվը կարելի էր հաշվել մատների վրա, ժողովրդի լայն շրջանակները շարունակում էին ամուր կառչած մնալ իրենց հավատքին ու Եկեղեցուն: Օրինակ՝ պետ. քաղ. վարչության շրջանային կոմիտեներ, ինչպես նաեւ անաստվածների կենտրոնական խորհուրդ ուղարկված գրություն-

39 Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին քանդվել է 1949 թվականին:

40 ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 228, թ. 5:

41 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 13, գ. 13, թ. 83:

42 ՀԱԱ, ֆ. 1, ց. 18, գ. 28, թ. 143:

43 «Անաստված», 1932, թ. 4, էջ 9:

44 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 19, գ. 36, թ. 111-112: Հակակրոնական քարոզչության յուրօրինակ դրսեւորում էր 1933 թ. հրատարակված «Հակակրոնական այբենարանը», որ պարունակում էր նկարիչ Միխայիլ Չերեմնիխի հեղինակած հակակրոնական բնույթի ծաղրանկարներ ռուսական այբուբենի յուրաքանչյուր տառի համար՝ համեմված հակակրոնական եւ հակաեկեղեցական արտահայտություններով. տե՛ս http://aquatek-filips.livejournal.com/210201.html:

45 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 53, թ. 178:

46 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 35, թ. 93:

47 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 18, գ. 28, թ. 142:

ներից պարզ է դառնում, որ գյուղերում հոգեւորականները գաղտնի այցելել են տներ եւ եկեղեցական ծես կատարել (կնունք, թաղում եւ այլն): Արձանագրվել են դեպքեր, երբ արդեն պահեստի վերածված գյուղական եկեղեցում դրել են մահացածի դին, չնայած եկեղեցում առկա մթերքներին[48]: Կուսակցական շրջաբերականներում եւ հաշվետվություններում հաճախ ենք հանդիպում տեղեկատվության, որ այս կամ այն շրջանի գյուղերում որոշ, այսպես ասած «հետամնաց գյուղացիներ» շարունակում են հավատալ «զանազան սրբերի, խաչերի, զանազան կանաչ եւ կարմիր ավետարաններին գլուխ դնելու համար ուխտագնացության են գնում, մատաղ անում եւ այլն...»[49]: Հակակրոնական քարոզչության անարդյունավետության եւ վերջին հաշվով տապալման մասին են վկայում ՀԿ(բ)Կ բյուրոյի եւ քարտուղարության նիստերում «Մարտնչող անաստվածների միության» գործունեությանն անդրադարձները: Գրեթե չկա մի դեպք, երբ նրանց գործունեությունից գոհ լինի կուսակցական ղեկավարությունը. անընդհատ արձանագրվում են թերություններ, բացթողումներ եւ աշխատանքի շատ ցածր արդյունավետություն, որին, որպես կանոն, հաջորդում են «Մարտնչող անաստվածների միության» ղեկավար կազմի անընդհատ փոփոխությունները: «Մարտնչող անաստվածների միության» կենտրոնական խորհրդի նախագահներն իրենց պաշտոնում հաճախ չէին բոլորում մեկ տարին: «Մարտնչող անաստվածների միությունը» տարբեր տարիների ղեկավարել են Դ. Բզնունին, Լ. Ղազարյանը, Ե. Խոջամիրյանը, Վարդունին, Ս. Շավերդովան, Գ. Ղազարյանը, Պ. Պետրոսյանը, Մ. Աղաբեկյանը, Անտոնյանը, Մ. Մելքոնյանը, Ա. Օգանեզովը, Ս. Գինոսյանը[50]: Իսկ 1938 թ. մարտին միության աշխատանքները գնահատվեցին «ծայրահեղ ծանր», ղեկավար կազմի որոշ անդամներ՝ Ս. Շավերդովա, Պ. Պետրոսյան, Դաբաղյան, Գուսեյնով եւ ուրիշներ, հռչակվեցին ժողովրդի թշնամիներ[51]:

Խորհրդային Միությունում հակակրոնական քարոզչության սնանկության մասին են վկայում նաեւ 1937 թ. մարդահամարի տվյալները, երբ հարցվածների մոտ յոթանասուն տոկոսը հայտնում էր իր հավատացյալ լինելու մասին[52], իսկ ԽՍՀՄ հայ բնակչության 16-ից բարձր տարիք ունեցողների մեջ իրեն «հայ լուսավորչական» էր համարել 142 հազար մարդ[53]: Ի դեպ, 1937 թ. մարդահամարի ժամանակ հավատացյալ լինելու վերաբերյալ հարցը հարցաթերթիկի մեջ մտել էր անձամբ Ստալինի նախաձեռնությամբ՝ պարզելու իր կողմից իրականացվող հակակրոնական քաղաքականության արդյունքները: Իսկ արդյունքները հիասթափեցնող էին, եւ դա էր պատճառներից մեկը, որ մարդահամարի արդյունքները հայտարարվեցին կեղծ, կազմակերպիչները ձերբակալվեցին եւ հռչակվեցին ժողովրդի թշնամի:

1939 թվականից սկսած հակակրոնական պայքարը բավականին մեղմացավ, իսկ 1941-ից գրեթե դադարեց, որի պատճառը, բնականաբար, վերահաս համաշխարհային

48 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 96, ց. 1, գ. 257, թ. 48:

49 ՀԱԱ, ֆ. 96, ց. 1, գ. 27, թ. 4:

50 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 10, գ. 18, 156, ց. 14, գ. 21, թ. 13, ց. 15, գ. 9, թ. 37, ց. 17, գ. 53, թ. 57, ց. 17, գ. 53, թ. 63, ց. 18, գ. 32, թ. 153, ց. 21, գ. 42, թ. 94:

51 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 18, գ. 28, թ. 142-143:

52 Տե՛ս ''Комсомольская правда'', 1991, 3 апреля, թ. 75 (20075):

53 Տե՛ս «Հայոց պատմություն», էջ 527:

պատերազմն էր եւ Գերմանիայի հարձակումը Խորհրդային Միության վրա: 1941 թ. Մոսկվայում անգամ դադարեցվեց «Безбожник» եւ «Антирелигиозник» թերթերի հրատարակությունը: Բռնաճնշումները եւ աթեիստական քարոզչությունը գրեթե դադարեցվեցին: Նման պայմաններում պետությանը անհրաժեշտ էր Եկեղեցու աջակցությունը թե՛ նյութական եւ թե՛ կազմակերպչական տեսակետից: Այս ամենի արդյունքում Հայ Առաքելական Եկեղեցին եւս լծվեց ֆաշիզմի դեմ համընդհանուր պայքարին՝ ներդնելով հսկայական նյութական, կազմակերպչական եւ քարոզչական միջոցներ: 1943 թ. նոյեմբերի 10-ին, հիմք ընդունելով ՀամԿ(բ)Կ կենտկոմի համապատասխան որոշումը, ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոն որոշում ընդունեց ՀԽՍՀ ժողկոմխորհին կից ստեղծել Հայ Առաքելական Եկեղեցու գործերով խորհուրդ[54], որին էլ վերապահվեց զբաղվելու Հայ Առաքելական Եկեղեցու գործերով: Այս նոր խորհրդի նախագահ նշանակվեց Սուրեն Հովհաննիսյանը, իսկ անդամներ՝ Կ. Ղաֆադարյանը եւ Հ. Աճառյանը[55]: «Մարտնչող անաստվածների միությունը» վերջնականապես լուծարվեց 1947 թ. ապրիլի 29-ին Ստալինի՝ ԽՍՀՄ նախարարների խորհրդի համար ստորագրած 1377 որոշմամբ, որով ստեղծվում էր Քաղաքական եւ գիտական գիտելիքների տարածման համամիութենական ընկերությունը[56], որին անցան «Մարտնչող անաստվածների միության» գույքն ու ֆունկցիաները: Սա հետագայում վերանվանվեց «Գիտելիք» ընկերություն:

Այսպիսով, բոլշեւիկների հակակրոնական եւ հակաեկեղեցական քաղաքականությունը եւ անաստվածության քարոզն ու աթեիզմի սերմանման հսկայական ջանքերը 1920-1930-ական թթ. սպասված արդյունքը չտվեցին: Չնայած իշխանություններին հաջողվեց որոշ չափով թուլացնել Եկեղեցին եւ զրկել նախկին ազդեցությունից, այնուամենայնիվ ողջ երկրի տարածքում ժողովուրդը շարունակում էր գաղտնի կամ բացահայտ հավատալ Աստծուն եւ մնալ Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդ:

Անհրաժեշտ է նշել, որ «Մարտնչող անաստվածների միության» լուծարումով եւ հետագայում Ստալինի մահով հակակրոնական եւ հակաեկեղեցական քարոզչությունը Խորհրդային Միությունում չդադարեց: Ճիշտ է՝ այն որոշ չափով մեղմացավ, սակայն շարունակվեց մինչեւ Խորհրդային Միության անկումը, երբեմն ունենալով սրացումներ՝ կախված տարբեր քաղաքական իրավիճակներից եւ խորհրդային առանձին ղեկավարների՝ եկեղեցական հարցերի նկատմամբ ունեցած դիրքորոշումներից: Խորհրդային տարիներին Հայաստանում իրականացված աթեիզմի քարոզչությունը, իշխանությունների հակակրոնական եւ հակաեկեղեցական գործունեությունը, այնուամենայնիվ, անհետեւանք չմնացին: Այդ ամենի արդյունքում հասարակության մեջ հայտնվեցին շերտեր, որոնք իրենց սկսեցին համարել աթեիստներ, եկեղեցական-կրոնական շատ ծեսեր ու ավանդույթներ ժողովրդի կողմից մոռացության մատնվեցին: Եւ միայն Հայաստանի անկախացումից հետո, երբ Հայ Առաքելական Եկեղեցին վերագտավ իր տեղը եւ կրկին հնարավորություն ունեցավ մոտ գտնվելու ժողովրդին, դրությունն սկսեց աստիճանաբար բարեփոխվել:

54 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 23, գ. 37, թ. 105:
55 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 24, գ. 23, թ. 83:
56 Տե՛ս http://pravoslavnij.livejournal.com/64754.html: